



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ՝
ՅՕՍ-Ի ՓԱՌԱՏՕՆԻ ԲԱՑՄԱՆ ԵՒ Հ.Բ.Ը.Ս.Ի 100-ԱՄԵԱԿԻՆ**

ՅՕՍԻ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը Մայիսի առաջին շաբաթավերջին կազմակերպած էր իր աւանդական տօնավաճառ-փառատօնը, որ տեղի ունեցաւ Կլենտէյլ քաղաքի Civic Auditorium-ին մէջ, Շաբաթ, 6 եւ Կիրակի, 7 Մայիսին:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինումով, Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ Յոգեւոր Յովիւ ու Կոստական Ժողովի ատենապետ Արժ. Տ. Վիգէն Ա. Քինյ. Վասիլեան Շաբաթ յետմիջօրէին ներկայ եղաւ փառատօնի բացման հանդիսութեան ու փոխանցեց Առաջնորդ Սրբազանին օրհնութիւնները:

Կիրակի, 7 Մայիսի երեկոյեան, Հ.Բ.Ը.Ս.ը Փասատիսայի «Ալեք Մանուկեան» կեդրոնին մէջ հանդիսաւորապէս տօնեց իր 100-ամեակը: Իբրեւ Առաջնորդ Սրբազանին ներկայացուցիչը՝ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան ներկայ եղաւ հանդիսութեան:

**PRELATE REPRESENTED AT A.R.S. FESTIVAL
AND A.G.B.U.'S 100th ANNIVERSARY**

On Saturday, May 6, and Sunday, May 7, the annual festival of the A.R.S. Regional Executive took place at the Glendale Civic Auditorium.

Archpriest Vicken Vassilian of Hollywood's St. Garabed Church, who is also the chairman of the Religious Council, representing H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, conducted the opening prayer and delivered the Prelate's blessings.

In the evening of Sunday, May 7, A.G.B.U. celebrated its 100th anniversary at the "Alex Manoogian" Center in Pasadena. Very Rev. Fr. Barthev Gulumian, co-director of the Prelacy Christian Education Department, represented the Prelate at the event.